Զոն Մարշալ տարրական դպրոց
Ծնողի և ընտանիքի ներգրավվածության քաղաքականություն
2021 - 2022

Նպատակը

Զոն Մարշալ տարրական դպրոցի նպատակն է յուրաքանչյուր երեխային տրամադրել բարձրորակ կրթություն՝ կիրառելով Համընդհանուր նահանգային չափորոշիչների վրա հիմնված ուսումնական ծրագիր (CCSS): Այս ծրագիրն ամեն տարի Վերամուտի երեկոյի ժամանակ բացատրվում և քննարկվում է: Ծնողների աջակցությունն իրենց երեխաներին և դպրոցին կարևոր է երեխաների զգացմունքային, սոցիալական և ուսումնական հաջողությունների համար:

Ծնողի ներգրավվածության վերաբերյալ հետազոտությունները ցույց են տվել, որ երբ դպրոցը և ծնողը համագործակցում են, աշակերտների ուսումնառությունն ավելի լավ է աջակցվում և աշակերտական ավելի բարձր առաջադիմություն է ապահովվում: Այն աշակերտները, ում ծնողները ներառված են իրենց դպրոցական կյանքի մեջ, ավելի լավ գնահատականներ և քննություններից ավելի բարձր միավորներ են ստանում, ավելի կանոնավոր կերպով են դպրոց հաճախում, ավելի լավ սոցիալական հմտություններ են ցուցաբերում և ավելի լավ են հարմարվում դպրոցին: Ընտանիքի մասնակցությունը, ինչպես՝ ակտիվորեն երեխայի ժամանակին հետևելը, տնային առաջադրանքների հարցում օգնելը և դպրոցի խնդիրները քննարկելը, ավելի մեծ հավանականություն է ստեղծում, որպեսզի աշակերտը դպրոցն ավարտելուց հետո կշարունակի իր կրթությունը, անգամ ավելի լավ բարձրագույն ուսումնական հաստատություններ կհաճախի:

Ծնողական ժողովներ/Ներգրավվածություն

Զոն Մարշալ դպրոցում ամեն ջանք գործադրում ենք ծնողներին տեղեկություն տալու համար դպրոցում առկա ծրագրերի բոլոր ոլորտների մասին, ներառյալ՝ դրանց բնույթի, կիրառման և գնահատման վերաբերյալ: Ի հավելումն տարբեր տեսակի և Title I ծնողական ժողովներին, Դպրոցական խորհրդի ժողովները մենք անցկացնում ենք Անգլերեն սովորողների խորհրդատվական հանձնախմբի ժողովների հետ համատեղ: Վերամուտի երեկոյի ժամանակ ծնողները Կրթաշրջանի ընթացիկ Ծնող-դպրոց պայմանագիրն են ստանում, իսկ նոր գրանցած աշակերտների ծնողները դրանք ստանում են գրանցվելու համար տրվող փաստաթղթերի հետ: Իսպաներենի և հայերենի բանավոր թարգմանություն, ինչպես նաև նյութերի գրավոր թարգմանություններ են տրամադրվում ժողովների ժամանակ և ըստ անհրաժեշտության: Բոլոր ծնողներին գրավոր ծանուցում է ուղարկվում ժողովների, դպրոցի հետ կապված իրադարձությունների և գործունեության մասին: Ծնողները նաև (Blackboard Connect) հեռախոսազանգ են ստանում տնօրենից, որի միջոցով տեղեկացվում է գալիք իրադարձությունների և ժողովների մասին:
Ի հավելումն ծնողական ժողովներին, բոլոր ծնողներին խրախուսում ենք դասարանում կամավոր աշխատանք կատարել և դառնալ Դպրոցական խորհրդի և հանձնախմբի ներկայացուցիչ:

Ծնողների ներգրավվածության տեսակները

- Ծնողների կամավոր աշխատանքի ծրագիր
- Ծնողական ակադեմիայի երեկոյան ծրագրեր
- Երկու ամիսը մեկ անգամ տեղի ունեցող սուրճ-զրույց
- Աշակերտների պարգևատրման ամսական միջոցառումներ
- Էքսկուրսիաների ժամանակ աշակերտներին ուղեկցել
- Երկու ամիսը մեկ անգամ տեղի ունեցող Հայրենասիրական միջոցառումներ
- Ծնող-ուսուցիչ ժողովներ
- Մարշալի Դպրոցական խորհուրդ/ Անգլերեն սովորողների խորհրդատվական հանձնախումբ
- Մարշալի անվտանգության ծրագրի հանձնախումբ
- Առաջնորդն իմ մեջ

Դպրոց-ծնող պայմանագիր

Title 1 ծրագրի պահանջների համաձայն, յուրաքանչյուր դպրոց ծնողների հետ կիսում է աշակերտների առաջադիմության պատասխանատվությունը և այն միջոցները, որոնց օգնությամբ դպրոցը և ծնողները կստեղծեն և կզարգացնեն համագործակցություն, որպեսզի օգնեն աշակերտներին հասնել կրթական բարձր չափորոշիչներին:

Դպրոց-ծնող պայմանագիրը ներկայացնում է՝

Դպրոցի պատասխանատվությունն առ այն, որպեսզի տրամադրի բարձր որակի ուսումնական ծրագիր և ուսուցմանն աջակցող միջավայրում անցկացվող ուսուցում:

Ծնողների պատասխանատվությունը և շարունակական հաղորդակցության կարևորությունը ծնողների և ուսուցիչների միջև:

Աշակերտների պատասխանատվությունը սովորելու մեջ:

Պայմանագիրը վերանայելուց և քննարկելուց հետո ուսուցիչները, աշակերտները և ծնողները ստորագրում են այն ամեն ուսումնական տարվա սկզբին: Դպրոցական խորհուրդը գնահատում է պայմանագիրն ամեն տարի և անհրաժեշտության դեպքում առաջարկում է փոխակերպումներ, փոփոխություններ: Պայմանագրի մեկ օրինակ պահվում է յուրաքանչյուր ուսուցչի ընդհանուր արկղում:

Համայնքի կարիքներին համապատասխանող ծրագրեր

Յուրաքանչյուր տարի Դպրոցական խորհուրդը կգնահատի ծնողների, աշակերտների և դպրոցի համայնքի կարիքները՝ կիրառելով կրթաշրջանի կողմից մշակված հարցաշարեր և այլ տեսակի գնահատման տվյալներ: Ծրագրերը կհամապատասխանացվեն գնահատումների/հարցաշարերի արդյունքներին:

Անձնակազմ-ծնող հաղորդակցություն

Ծնողների և դպրոցների միջև հաղորդակցությունը կիրականացվի ծնող-ուսուցիչ ժողովների, Ծնողական ակադեմիայի երեկոների, Սուրճ-զրույց տնօրենի հետ միջոցառումների, Վերամուտի երեկոյի, Տարեկան Title I ժողովների, Բաց դռների օրվա, Հինգշաբթի օրվա թղթապանակների, Առաջադիմության զեկույցների, Առաջադիմության թերթիկների, Տնօրենի կողմից Blackboard Connect հեռախոսազանգերի, Social Media Glendale App-ի և Peachjar-ի միջոցով: Դպրոցի առջևում գտնվող տեղեկատվական տախտակի վրա նույնպես նշվում են ծնողական ժողովները և իրադարձությունները: Դպրոցի և կրթաշրջանի իրադարձությունների հետ կապված նորությունները տարբեր լեզուներով տուն են ուղարկվում հինգշաբթի օրվա թղթապանակներով: Ծնողների հետ ժողովների համար առկա են թարգմանիչներ: Հաղորդակցությունը հեշտացնելու նպատակով յուրաքանչյուր աշակերտի ծնողի հեռախոսահամարները տրամադրվում են ուսուցիչներին:

Հասանելիություն

Ծնողների ներգրավման պահանջներից ելնելով՝ անգլերենի սահմանափակ իմացությամբ և անկարողություն ունեցող ընտանիքներին դպրոցը լիարժեք մասնակցության հնարավորություն կտրամադրի: Դա նշանակում է, որ տեղեկությունները և զեկույցները կտրամադրվեն ծնողներին հասկանալի լեզվով (հնարավորության սահմաններում):

Բողոքներ/Մտահոգություններ

Ձեր աշակերտի հետ կապված բոլոր բողոքները և մտահոգությունները պետք է նախ և առաջ քննարկել դասարանի ուսուցչի հետ: Դպրոցի գրասենյակ ուղղված հեռախոսազանգերը, էլ. նամակները և փոստային նամակները, որոնք կվերաբերեն դասարանում, խաղադաշտում տեղի ունեցած միջադեպին կամ կառնչվեն աշակերտի հետ կապված որևէ ծրագրին, առաջին հերթին կփոխանցվեն դասարանի ուսուցչին: **Միայն ուսուցչի հետ ժողով ունենալուց հետո ծնողը կարող է պահանջել ժողով տնօրենի հետ:**

Քաղաքականությունը զարգացնելու մեջ ծնողի ներգրավվածությունը

Դպրոցի անձնակազմը և Դպրոցական խորհուրդը Ծնող-դպրոց/ուսուցիչ-աշակերտ պայմանագրի հիման վրա զարգացրել է Ջոն Մարշալ տարրական դպրոցի Ծնող/դպրոց ներգրավվածության քաղաքականությունը: Այս քաղաքականությունը հասանելի կլինի Ջոն Մարշալ տարրական դպրոցում գրանցված բոլոր աշակերտների ծնողներին և տեղական համայնքին: Ամեն տարի քաղաքականությունը կթարմացվի, որպեսզի ծնողների և Ջոն Մարշալ տարրական դպրոցի կարիքների փոփոխությանը համընթաց լինի: Ջոն Մարշալ տարրական դպրոցը հակված է ծնողի ներգրավվածությանը: Քաղաքականությունը կհամակարգվի դպրոցի տնօրենի, մասնագետ ուսուցչի և Դպրոցական խորհրդի կողմից և կխթանվի ամբողջ անձնակազմի կողմից: